*Մեծարոյ*

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ բարեհաճ տնօրէնութեամբ՝ ս. Էջմիածնի կեդրոնական Յոբելենական Յանձնաժողովս պատիւ ունի խնդրել Ձեզ, Մ. Տ., որ հաճիք մասնակցել ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐԻՆ, որոնք տեղի պիտի ունենան ս. Էջմիածնում տարւոյս հոկտեմբերի 12, 13 և 14-ին։

Ներկայացուցիչ ուղարկելու դէպքում՝ խնդրւում է նախօրօք յայտնել Յանձնաժողովիս։

*Նախագահ Յոբելենական Յանձնաժողովի՝*

ԳԱԼՈՒՍՏ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆ

*Անդամ-Քարտուղար՝* ԳԷՈՐԳ ՎԱՐԴ. ՉԷՕՐԷՔՉԵԱՆ

---

ՄԵԾԱՐՈՅ

ՏԷՐ ԽՄԲԱԳԻՐ,

Հաճեցէք պատուական թերթիդ մերձակայ համարներից մէկում գետեղել հետևեալը.

Ս. Էջմիածնի Յոբելենական Յանձնաժողովը խնդրում է այն բոլոր հեղինակներին, որոնք գրերի գիւտի կամ տպագրութեան յոբելեաններին նուիրած որ և է աշխատութիւն ունին՝ հաճել մի-մի օրինակ ուղարկել Յանձնաժողովիս հետևեալ հասցէով. Эчміадзинъ, Председателю центральнаго Юбилейнаго Комитета армянскаго альфавита и печати.

Յոբելեանների յիշատակը յաւերժացնելու համար շնորհակալութեամբ ընդունւում են նկարներ, ձեռագրեր, հնութիւններ և առհասարակ ամեն տեսակ նուէրներ։

*Նախագահ Յոբելենական Յանձնաժողովի՝*

ԳԱԼՈՒՍՏ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆ

*Անդամ-Քարտուղար՝*

ԳԷՈՐԳ ՎԱՐԴ. ՉԷՕՐԷՔՉԵԱՆ

8/IX 1913 *թ.*

Ս. Էջմիածին.